

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ  
(ՅԱՇՎԱՐԿԱԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

*Ուժի մեջ է 2015թ. փետրվարի 20-ից*

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, «ACBA ON-LINE» համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

**ԲԱՆԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՐԱՏԵՂԵՐՈՒՄ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>**

55. Արժեքների պահատվության համար անհատական պահատուփերի վարձավճարներն են (ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն).

| Պահատվության ժամկետը | Անհատական պահատուփերի չափերը (բարձրություն, լայնություն, երկարություն) |                  |                  |
|----------------------|--|------------------|------------------|
|                      | 50x220x335 (մմ)  | 115x220x335 (մմ) | 140x410x480 (մմ) |
| 14 օր                | 5000   | 7000             | 9000             |
| 1 ամիս               | 7000   | 10000            | 12000            |
| 3 ամիս               | 12000  | 18000            | 22000            |
| 6 ամիս               | 20000  | 28000            | 32000            |
| 1 տարի               | 30000  | 35000            | 45000            |

| Պահատվության ժամկետը | Անհատական պահատուփերի չափերը «Արմենիա» մասնաճյուղի համար (բարձրություն, լայնություն, երկարություն) |                 |                  |                  |                  |
|----------------------|--|-----------------|------------------|------------------|------------------|
|                      | 50x300x400 (մմ)  | 75x300x400 (մմ) | 125x300x400 (մմ) | 175x300x400 (մմ) | 300x300x400 (մմ) |
| 14 օր                | 7000   | 9000            | 11000            | 13000            | 15000            |
| 1 ամիս               | 14000  | 18000           | 21000            | 25000            | 30000            |
| 3 ամիս               | 20000  | 25000           | 30000            | 35000            | 40000            |
| 6 ամիս               | 32000  | 38000           | 45000            | 50000            | 55000            |
| 1 տարի               | 45000  | 50000           | 60000            | 70000            | 80000            |

56. Բանկի պատասխանատվության չափը 1 000 000 ՀՀ դրամ

57. Պայմանագրի ժամկետի ավարտից հետո, սկսած հաջորդ գործառնական օրվանից, անհատական պահատուփը չազատելու դեպքում հաճախորդից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվող տույժ 500 ՀՀ դրամ

58. Վարձավճարն ամբողջ ժամանակաշրջանի համար հաճախորդից գանձվում է միանվագ՝ պայմանագրի կնքման պահին

59. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում հաճախորդի կողմից Բանկին վճարված վարձավճարը հաճախորդին հետ չի վերադարձվում

**ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՊՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ)**

|   |                                |
|---|--------------------------------|
| 60. Հեռապատճեն արտասահման, 1 էջը՝                                   | 3,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)  |
| 61. Փոստով առաքում  |                                |
| - DHL (մինչև 150 գրամ)  | 60,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) |
| - սովորական փոստով (մինչև 150 գրամ)                                 | 1,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)  |
| 62. Կատարված փոխանցման հաստատումը հաճախորդին իր խնդրանքով ուղարկելը | 5,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)  |
| 63. Արժեքների և փաստաթղթերի ի պահ ընդունում՝                        | պայմանագրային                  |

<sup>1</sup> Ծառայությունը մատուցվում է ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին և միայն Բանկի «Արմենիա», «Նոր Նորք» և «Շիրակ» մասնաճյուղերում: